

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ձեռագրի իրավունքով

ՍԱՀԱԿՅԱՆ ՄԱՐԱՏ ԳՈՒՐԳԵՆԻ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՍԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ
(ԽՍՀՄ հյուսիս-արևմտյան և արևմտյան շրջաններ)
1941-1945թթ

Մասնագիտությունը — Հայոց պատմություն, է.00.01

Պատմական գիտությունների դոկտորի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

Մ Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 1997

Աշխատանքը կատարվել է ՀՀ ՊԱԱ Պատմության ինստիտուտում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

- 1. Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ՊԱԱ ակադեմիկոս Գ.Բ.ՂԱՐԻՔԱՆՅԱՆ
- 2. Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վ.Ա.ՊՈՂՈՍՅԱՆ
- 3. Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հ.Ս.ՀԱՐՈՒԹՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի ԽՍՀՄ ԳԱ Պատմության ինստիտուտ
մանկավարժական ինստիտուտ

Առեւտրային կազմակերպությունը կայանալու է ժ. 1 4-12
,, 97, , ~~1997~~ 1997 թ. ՀՀ ՊԱԱ Պատմության ինստիտու-
տի պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան շնորհող
004 մասնագիտական խորհրդի նիստում /375019, Երևան 19, Մարշալ
Բաղդամյան 24⁹/:

Առեւտրային կազմակերպության հետ կարելի է ծանոթանալ ՀՀ ՊԱԱ Պատմության
ինստիտուտի գիտական կայքինստում:

Սեղմագիրը առաքված է ,, 25, , ~~1997~~ 1997 թ.

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, պատմական գիտություն-
ների թեկնածու  Վ.Ա.ՄԵԼԻՔՆՅԱՆ

*Հարգարժան ակադեմիկոս
Գ. Բ. Ղարիքյանին սիրով և խորին
կարգավորով:*

1.05.1997

ՀԽՄԱՀԱՐՑԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՍԱԳՈՒԹՅՈՒՆԸ. Հայ ժողո-
վուրդը ընդունեց խղճով, աշխատասեր, արարող ու շինարար ժողովուրդ
լինելով հանդերձ, նաև պատերազմող, կռվող ու մարտնչող ժողովուրդ է:
Բազմադարյան իր պատմության ընթացքում նա բազմաթիվ պատերազմներ է
մղել սահմանակից հարևան երկրների և Արևելքի խորքերից իր տարածքնե-
րը ներսուծած տարբեր քոչվոր ցեղերի դեմ: Դրա համար էլ մեր ժողո-
վրդի պատմությունը իրավամբ պատերազմների պատմություն է: Բայց այդ
պատերազմները եղել են ոչ թե զավթիչ, կողոպտիչ, հարևաններին ստրկաց-
նելու կամ էլ նվաճողական պատերազմներ, այլ իր պատմական հայրենիքի
տարածքային ամբողջականությունը, երկրի անկախությունը, ազգային
նկարագիրը, գոյությունը, հավատքը ու հայ լինելը պաշտպանելու պատե-
րազմներ: Ինչպես վկայում է պատմությունը, հայ ժողովուրդը դարձրել է իր
քրոջ չկորցնելով իր հոգու կրողը, ամբողջունը, ազգունությունը,
դիմացկանությունը, համառությունը, հույսով լավ ու լուսավոր օրերի
հասնելու ձգտումով: Նվաճվել է Արևելքի գերհզոր պետությունների
կողմից և այս պայմաններում էլ մեր ժողովուրդը շարունակել է պայքար-
ել, կռուցել ու առեղծադրել: Կռուցել է քաղաքներ, պալատներ,
ջրանցքներ, ամրոցներ, բերդեր, եկեղեցիներ, համալսարաններ, առեղծել
36 գիւղերից բաղկացած իր անպարտելի հզոր բանակը և դրա մի շրջով
աշխարհին սվել գիտության այնպիսի հսկաներ, ինչպիսին են Մովսես Խո-
րենացին, Մեսրոպ Մաշտոցը, Գրիգոր Նարեկացին, Գավթի Անհաղթը, Ան-
նիա Ծիրակացին և շատ ուրիշներ:

20-րդ դարի սկզբին թուրքական բարձրոսների ձեռքով առաջին
աշխարհում ենթարկվեց մեծագույն ցեղասպանության, սվեց 1,5 միլիոնից
ավելի գոհ, դիմացավ ԽՍՀՄ-ում 1930-ական թվականների առաջին շա-
սհավոր բռնություններին, կորցրեց շատ նշանավոր մարդկանց՝ քաղաքական,
ոգնական, գիտություն ու մշակույթի գործիչներ, շարքային կոլտնտեսա-
կաններ ու բանվորներ: Մասնակցեց բոլոր ժամանակների ամենահամարձակ պա-
տերազմին 1939-1945 թթ. Երկրորդ համաշխարհային պատերազմին: Դիմա-
ցավ այդ մեծ փորձությունը, հերոսացավ և նորից կորցրեց հարյուր հա-
զարավոր իր լավագույն զավակներին:

1941-1945 թթ. պատերազմը առանձնահատուկ է մեր և աշխարհի
բոլոր ժողովուրդների համար: Այդ պատճառով էլ գերմանական ժաշիգմի
դեմ տարած պատմական հաղթանակը հանդիսանում է նաև աշխարհի
բոլոր խոշոր երկրներում:

Ժամանակի վազքը մեզ ավելի ու ավելի է հեռացնում երկրորդ
համաշխարհայինի սկսման 1939 թ. սեպտեմբերի 1-ը, խորհրդային Միու-

թյան Հայրենական մեծ պատերազմի սկսման 1941 թ. հունիսի 22-ը և գերմանական Ֆաշիզմի դեմ տարած պատմական հաղթանակի 1945 թ. մայիսի 9-ը: Որքան էլ, որ այդ տարիները հեռանա պատմության խորքը, ներկե և հետագա սերունդները միշտ կհիշեն և արժանավայել կհատուցեն այն մարդկանց, որոնք մարդկության մեծագույն շարիքի՝ Ֆաշիզմի դեմ կենաց ու մահու գոտեմարտում կրեցին ու հաղթահարեցին քաղում դժվարություններ, հերոսաբար կռվեցին, մարտնչեցին ու հաղթեցին:

Ջինվորական երդումին ու պարտքին հավատարիմ հայրերդիները թշնամու դեմ կռվեցին անձնվիրաբար, համարձակ, շինարարական ամենաթանկագին կյանքը: Թշնամու դեմ էին կռվում նաև 1915 թ. եղեռնից հրաշքով փրկված վանեցիները, մշեցիները, սասունցիները, էրզրումցիները, դարսեցիները, քասնցիները, խարբերդիները, մուսալեոցիները, կրանց զավակներն ու թոռները: Նրանք քաղված զինակցում էին, որ բոլշևիկների կողմից շնորհած մի կտոր հողի վրա գոյատևող ժողովրդի դիմաց կանգնած է նախկին կայսերական և հիտլերյան Գերմանիայի հավատարիմ դաշակից՝ Բուրջիան, որը ժանիքները սրած հաքմար պահի էր սպասում ներխուժել Հայաստան և ավարտել 20-րդ դարի սկզբին կիսատ թողած իր ոճիրը:

1993 թ. մայիսի 9-ին լրացավ այդ հաղթանակի 50-րդ տարելիցը: Արևմտյան ու Անկախ պետությունների համագործակցության երկրները մեծ շուքով ու հանդիսություններով նշեցին այդ օրը: Նորից ու նորից հիշեցին ու իրենց զուլեխները խոնարհեցին այդ պատերազմի միլիոնավոր զոհերի հիշատակի առաջ, միաժամանակ մեծարելով ու նրախազգիտության շքամ խոսքեր ուղղելով մասնակիցներին, որոնք շարունակում են աշխատել ու ստեղծագործել:

Նորաստեղծ ազատ ու անկախ երկրասարդ Հայաստանի Հանրապետությունում պետական մակարդակով նույնպես նշվեց այդ օրը:

1939-1945 թթ. պատերազմը մի շարք կողմերով տարբերվում է թշնամիների դեմ հայ ժողովրդի նախկինում մղած բազմաթիվ պատերազմներից:

Առաջին՝ հայ ժողովուրդը բազմադարյան իր պատմության ողջ ընթացքում այնքան զինվոր չէր ուղարկել ուսումնական, որքան ուղարկեց 1939-1945 թթ.: Հայ ժողովուրդը բացի ուսումնականներում մարտնչող իր բազմաթիվ զավակներից, մարտունակ հինգ հրաձգային դիվիզիա ուղարկեց ուսումնական:

Երկրորդ՝ հայ ուսանողները կռվում էին թշնամու դեմ ոչ թե Հայաստանի կամ նրան մոտիկ տարածքներում, այլ 400-4000 կմ հեռավորության վրա՝ Բարենցի ծովից մինչև Աև ծով, Կովկաս:

Երրորդ՝ ոչ մի պատերազմում մեր ժողովուրդը ուսումնականում այնքան զոհեր չի տվել, որքան այս պատերազմում:

Չորրորդ՝ ոչ մի պատերազմում մեր ժողովրդի ուսումնական տղաները

այնպես բարձր չի դրսևորվել, ինչպես այս պատերազմում: Պատերազմի ընթացքում ծնվեցին ուսումնական գործին զիտակ բազմաթիվ զեներալներ, կադրային բարձրագույն հրամկազմի սպաներ, որոնցից հիսուսից ավելին դեկավարեցին տարբեր գորամիավորումներ, իսկ մի մասն էլ կարևոր պատասխանատու պաշտոններ էր զբաղեցնում կարմիր բանակի դեկավար օղակներում:

Նրանցից բանակի զեներալ Հովհաննես Բաղդամյանը /հետագայում խորհրդային Միության մարշալ/, նավատորմի ծովակալ Հովհաննես խակովը /հետագայում խորհրդային Միության ծովակալ/, զեներալ գնդապետ Միխայիլ Պարսեղովը դեկավարեցին ուսումնականներ, նավատորմներ և բանակներ: Այդ պատերազմում ծնվեց հայ ժողովրդի առաջին մարշալը, ավիացիայի մարշալ Արզեյ Խուդյակովը /Արմենակ խաֆերյանց/:

Հինգերորդ՝ ոչ մի պատերազմում հայ ժողովրդի զավակների մարտական սխրանքներն ու հերոսությունները այնպես մասսայական ու գանգաձայնի չեն եղել, այնպես ուժեղ չեն դրսևորվել, ինչպես այս պատերազմում. շքանշաններով ու մեդալներով 66802 պարգևատրվածներ, 104 խորհրդային Միության հերոսներ, 27 Փառքի լրիվ ասպետներ:

Վեցերորդ՝ ի տարբերություն նախորդ պատերազմների, ժամանակակից զենքով զինված խորհրդային բանակի բոլոր գորատեսակներում ի հայտ եկան հազարավոր շնորհալի, իրենց գործը զերազանց տիրապետող օդաչուներ, հրետանավորներ, տանկիստներ, նավատորմայիններ, հեռախոյզներ, կապավորներ, սակրավորներ, բարձր որակավորում ունեցող ինժեներներ, բժիշկներ և այլն: Հայրերդիները զերազանց դրսևորեցին նաև պարտիզանների շարքերում:

Յոթերորդ՝ հայրերդիները թշնամու դեմ էին կռվում ոչ թե միայնակ, այլ խորհրդային Միության բոլոր ազգությունների ու ժողովուրդների զավակների հետ միասին, ունենալով ընդհանուր թիկունք:

Ութերորդ՝ բազմաթիվ հայրերդիներ Ֆաշիզմի դեմ մարտնչեցին դաշակիցների գործերի կազմում՝ խաղաղ օվկիանոսում, Մալայան Արշիպելագի կղզիներում, Աֆրիկայում, Չինաստանում, Արևելյի երկրներում, Եվրոպայում և այլն:

Այսպիսին է հայ ժողովրդի զավակների մարտական սխրանքների քարտեզը:

Իրավամբ այդ պատերազմը հանդիսացավ հայրերդիների ուսումնական տղաների, նրա ամենալավագույն հատկությունների դրսևորման ստուգատեսք:

1944 թ. օգոստոսի 1-ի տվյալներով ԽՍՀՄ միութենական հանրապետությունների հիմնական ազգությունների շքանշանում, կառավարական շքանշաններով ու մեդալներով պարգևատրվածների քանակով հայ ուսանողները զբաղեցնում էին հինգերորդ պատվավոր տեղը /ոուսներից, ուկրաինացիներից, բելոռուսներից, դաշակներից հետո/,¹ երբ ԽՍՀՄ-ի տարածքում խորհրդային զինված ուժերը, ֆ.303, ց.4065, գ.23, թ.176:

շոր մակամարտերը նույն էին մնացել /Մոսկվա, Լենինգրադ, Սաելինգը-
րադ, Կովկաս, Ղրիմ, Կուրսկ և այլն/:

Հայ ժողովուրդը իր ուժերի հարավորությունների սահմաններում այդ
պատերազմում շատ մեծագործություններ կատարեց և իր Թվաքանակի համեմա-
տությամբ ովեց շատ զոհեր: Եվ այժմ, երբ Հայաստանը անկախ ու ինքնու-
րույն պետություն է, երբ նոր իրադրության պայմաններում, կյանքի բո-
լոր քնազավառներում տեղի են ունենում արմատական փոփոխություններ,
հայ պատմաբանների լինդիրն է նորովի ու բազմակողմանի լուսարանել, լրաց-
նել ու ավելի հարստացնել հայ ժողովրդի 20-րդ դարի պատմությունը, այդ
Թվում նաև խորհրդային Հայաստանի և Արևելքի մասնակցությունը 1939-
1945 թթ. երկրորդ համաշխարհային պատերազմին:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆԳԱՏԱԿԱՆ ՈՒ ՆՆԻՐՆՆԵՐԸ. Պատերազմի պատմության
մեջ իրեն հավասարը չունեցող այդ պատերազմում, հայ ժողովրդի զավակ-
ները դրսևորեցին ռազմական զործին ու ժամանակակից զենքին տիրապետե-
լու տրակական նոր հատկություններ, որի վերհանումն ու բազմակողմանի
ուսումնասիրումը ոչ միայն զիտական նշանակություն ունի, այլև ներկա-
յիս և ապագա սերունդներին կփոխանցի մեր ժողովրդի մարտական մեծ հերոսա-
կան սերագործության պատմությունը:

Ուսումնասիրության նպատակն է նորովի շարադրել 1939-1940 թթ.
միջազգային դրությունը պատերազմի նախորդակին, Ֆաշիզմի ու աղմուկած
կոմունիզմի սիրախաղերը աշխարհում իրենց ազդեցությունը տարածելու ու
ամրապնդելու նպատակով և ժողովրդավարական երկրների անուրջ վերաբեր-
մունքը պատերազմի սպառնալիքի նկատմամբ: Ցույց տալ հայ ժողովրդի մարդ-
կային ուժերի մոբիլիզացիան 1939-1945 թթ. զորակոչը /մինչև 18 տարին
լրացած/ և քննադատել զորահավաքը:

Աշխատության հիմնական նպատակն է վեր հանել ԽՍՀՄ հյուսիսարևմտ-
յան և արևմտյան տարածաշրջաններում գերմանա-ֆաշիստական զավթիչների
դեմ մղված ահեղ զոտամարտերում բարձրագույն հրամկազմի հայ զենաբալնե-
րի, սպաների ռազմավարական արվեստը, նրանց մարտավարությունը, բարոյա-
քաղաքական կոնվանությունը, ռազմական պարտատվածությունը, հազարավոր
հայ շարքայիների ու սերմանների մասսայական սիրագործությունները ու
հերոսությունները, նրանց տոկունությունը, դիմացկունությունը, հայրե-
նասիրությունը, նվիրվածությունը, գին/որական երդումին հավատարմու-
թյունը, զորամասերում տարվող քաղաքական աշխատանքը և այլն:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշելու սասունցու զավակ
մուշեղ Քալշոյանի Թևադոթ խոսքերը. ,, Ես ժողովրդին ոգի է հարկաւոր,
իր երգը տալ է հարկաւոր, իր պատմութիւնը տալ է հարկաւոր, իր նստկա-
նութիւնն է հարկաւոր: Եթէ Ես պատմաբան լինէի, կը կազմէի մեր անցած

պատմութեան ընտիր երկերը, -հատուածաբար, եւ ըլլորը էն հերոսական
դրուագները, որ մեր պատմութեան մէջ փայլատակում են...

Եւ ժողովրդի ինքնասիրությունը կը շոյուի, ժողովրդի մեջ ամբա-
պնդում է ինքնասիրությունը, որ ինքը հերոսական անցեալ է ունեցել, որ
ինքը սպանել է, որ ինքը տիրել է, որ ինքը կոտորել է, որ ինքը
դիմադրել է, որ ինքը չի մեռել, որովհետև սպանուելուց յետոյ էլ
հաղթել է...:

Ժողովուրդը, հայ ժողովուրդը հերոսական պատմութեան կարոտ է...:

Աշխատության հիմնական նպատակը և խնդիրը հենց դա է: Մոռացության
չտալ մեր սպանելի ու հայրերի հերոսական անցյալը քացահայտել նրանց
մարտավարական մեծագործությունները, կատարած սիրանքները, որը ան-
շուշտ ոգևորության ու վստահության աղբյուր կմտադրի իր ուժերի նկատ-
մամբ և հավատով լցված կյանքի ապագային: Նրանց հերոսական օրինակով
կդաստիարակվեն մեր ապագա սերունդները:

ԱՍԵՆԱՐՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ. Ատենախոսության բովանդակու-
թյան մի մասը հրապարակվել է հեղինակի երկու մենագրություններում,
երկու համահեղինակային աշխատություններում, երկու կոլեկտիվ աշխա-
տություններում, 15-ից ավելի զիտական հոդվածներում, որոնք լույս
են տեսել 22 ՊԱՍ ,,Պատմա-բանասիրական,, 22 ՊԱՍ ,,Լրաբեր հասարա-
կական զիտությունների,, ,,Բանբեր Հայաստանի արխիվների,, ,,Բան-
բեր համալսարանի,, ,,Լենինյան ուղիով,, հանդեսներում, ինչպես
նաև չորս տասնյակ այլ հոդվածներում, որոնք հրապարակվել են հանրա-
պետական մի շարք թերթերում և Հայկական խորհրդային հանրազիտարանում,
շուրջ 80 սպազրական մամուլ ընդհանուր ծավալով: Ատենախոսության բո-
վանդակության մի մասը արտացոլող աշխատությունների ցուցակը կցվում է
սեղմագրի վերջում:

Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից շարադրվել
են 22 ՊԱՍ պատմության ինստիտուտի երիտասարդ զիտաշխատողների և ասպի-
րանտների զիտաժողովում /փետրվար, 1970 թ/, Հայրենական մեծ պատե-
րազմում տարած հաղթանակի 40-ամյակին և 50-ամյակին նվիրված 22 ՊԱՍ
/ապրիլ, 1995/ և Երևանի պետական համալսարանի պատմության Ծակուլ-
տեսի /մայիս, 1995/ հոգեւյանական նստաշրջաններում:

Սույն ատենախոսությունը քննարկվել է 22 ՊԱՍ պատմության ինս-
տիտուտի հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին
Թեմատիկ խմբի և Երևանի ՆԱԲՐՈՎյանի անվան մանկավարժական ինստիտու-
տի հայոց պատմության ամբիոնի նիստերում: Ատենախոսությունը արձանա-
ցել է հավանության ու երաշխավորվել պաշտպանության:

1 Ազատամարտ, 23-29 դեկտեմբերի, 1994 թ.; ,,Բազին,, ամսագիր,
հունվար 1981 թ.:

ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՐՑԻ ՌԻՍՈՒՄԱՆՍԻՐԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ: Խորհրդային Հայաստանում մեծ հայրենականի պատմության ուսումնասիրությունը սկսվեց հենց պատերազմի տարիներին: Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի բյուրոն 1943 թ. մարտի 3-ին ընդունեց կարևոր որոշում, որտեղ ասված է. «,Հանձնարարել ԱՐՄԱՆ-ի նախագահությանը վերակառուցել պատմության ինստիտուտի աշխատանքները՝ պատմության ինստիտուտի հիմնական խնդիրներից մեկը համարել Հայրենական մեծ պատերազմի պատմության նյութերի հավաքումը, ուսումնասիրումը և հրատարակումը. ստանձնագետ հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական պատերազմին»¹:

Նկատվելով այդ որոշումը, ՀԽՍՀ ԳԱ առաջին պրեզիդենտ, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու նախածնունդով պատմության ինստիտուտում ստեղծվեց Հայրենական պատերազմի պատմության կարիքնա: Իր ամբողջ գոյության ընթացքում մեծ քանակությամբ նյութեր հավաքվեցին: Ատեղծվեցին հայկական ղվիվզիաների, Խորհրդային Միության հայ մարշալների, գեներալների, Խորհրդային Միության հերոսների, ավագ, միջին հրամանատարական կազմի և սարքեր գործառնականների պատկանող հայ ռազմիկների ու պարտիզանների ֆոնդեր:

Պատերազմին հայ ժողովրդի մասնակցությունը պատմության ուսումնասիրությանը առաջին ակնեցին պատերազմից հաղթականորեն վերագրած շքանշանակիր պատմաբաններ Արամայիս Մնացականյանը, Երվանդ Խալեյանը, Արշավիր Հակոբյանը, Երիտասարդ պատմաբաններ Վոլոգյա Ղազախեցյանը, Քնարիկ Գրիգորյանը, Լիզա Մարտիրոսյանը և ուրիշներ:

Արխիվներից ու մամուլից նյութեր հավաքելուց բացի, Հայրենական մեծ պատերազմի պատմության կարիքնաի վարիչ Երվանդ Խալեյանը, գիտաշխատողներ Քնարիկ Գրիգորյանը և Լիզա Մարտիրոսյանը քաղաքացիական պատերազմի պատմության ու գրույցներ են ունեցել պատերազմի մասնակիցների հետ: Խրատմով զրի առել նրանց պատմածներն ու հուշերը, որը ներկայումս անգնահատելի արժեք են ներկայացնում հատկապես այն պատմաբանների համար, ովքեր ուսումնասիրում են 1939-1945 թթ. երկրորդ համաշխարհային և Խորհրդային Միության 1941-1945 թթ. հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի զավակների մասնակցությունը պատմությանը:

1 Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվ /տպատ. հեռ.՝ 22 ՀՔԹԳԿ արխիվ/, Ֆ. 1, ց.02, գ.14, թ.28:

Օգտվելով տեղական արխիվային, ռազմաճակատային մամուլի նյութերից ու մասնակիցների զբաղող հիշողությունների հիման վրայ հայ պատմաբանները լույս ընծայեցին քաղաքացիական պատերազմի ուսումնասիրություններ Հայրենական պատերազմում հայ ժողովրդի մասնակցության մասին:¹ Գիտական ամսագրերում ապագրվեցին մի շարք արժեքավոր հոդվածներ:² Հրատարակվեցին ստանձին հերոսների ու գեներալների մասին զրբույլներ:³

Հայ ռազմիկների մարտական սխրանքների մասին են պատմում Լենինգրադի ռազմամեկտի քաղվարչության հրատարակած «,Առվետական Հայաստանի զավակները՝ Լենինգրադի պաշտպաններ», և ԽՍՀՄ-ի նախտորմի ծովակալ Հ. Խոսկովի «,Հայ ծովայինները Հայրենական մեծ պատերազմում» զրբույլները, որոնցում վաղ կերպով քննորոշվում են հայ հետվակայինների, ծովայինների և օդաչուների մարտական վարպետությունը:

Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին, ամբողջությամբ վերցրած, առաջին անգամ ցույց է տրվել 1954 թ. լույս տեսած Անհամացականյանի «,Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում», ծավալուն մենագրության մեջ:

Խորհրդային Միությունում, ինչպես նաև Հայաստանում Հայրենական պատերազմի պատմության գիտական ուսումնասիրման կարևոր զործը մեծապես խթանեցին 1956 թ. ԽՄԿԿ 20-րդ համագումարի և 1962 թ. պատմաբանների համամիութենական խորհրդակցության որոշումները: Հասարակական գիտությունների քննազավտի աշխատողները և հատկապես պատմության քննազավտի աշխատողները թթվածին ստացան որոշ շահով և խթանը շնչելու համար: Վերացվեց անհատի պաշտամունքի հետ կապված խոչընդոտները, բայց գիտությունը շարունակեց մնալ կոմունիստական աղավաղված գաղափարախոսության շրջանակներում: Այնուամենայնիվ այդ որոշումները բարենպաստ մթնոլորտ ստեղծեցին ավելի իրական շարադրել պատմությունը և քննադատական մոտեցում դրսևորել պատերազմի և նրա նախորդակին զադտնի մնացած շատ դեպքերի ու իրադարձությունների նկատմամբ: Հա-

1 Հ. Խոսկով, Հայ ծովայինները Հայրենական մեծ պատերազմում, Երևան, 1946 թ.: Ա. Ն. Մնացականյան, Հայ ռազմիկների հերոսական տարեգրությունները, Երևան, 1942 թ.: Ս. Հ. Թովմասյան, Առվեսի պաշտպանության մարտական դիրքերում, Երևան, 1947: Ս. Նալբանդյան, Հայ թամանգիները, Երևան, 1956 թ., «,Մեծ Հիկտեմբերի որոշի ներքո», 1957 թ: Ն. Մ. Խալեյան, Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական պատերազմում, Գ. ժ. Միլոզանյան: Հայաստանի կոմերիտի կուլյուրը Հայրենական պատերազմի տարիներին, Երևան, 1956: Հ. Նալբանդյան, Լենինգրադի հերոսական պաշտպանությունը, Երևան, 1958 թ.:

2 Ն. Մ. Խալեյան, Միկոյանի անվան հայկական պարտիզանական շրկատի մարտադրանքները Ուկրաինայում, 1943-1944, ՀԽՍՀ ԳԱ, Տեղեկագիրք հմ. 2, 1947: Բ. Գ. Գրիգորյան, Հայ ծովայինները Առվեսի պաշտպանության համար մղված մարտերում, ՀԽՍՀ ԳԱ, Տեղեկագիրք, հմ. 5, 1956:

3 Գ. Ատեմանյան, Առվետական Միության հերոս Մեղգեյ Օհանյան, Երևան, 1944 թ., Ա. Մալխասյան, Գեներալ-մայոր Նվեր-Մամարյան, Երևան,

սարակութեանը աստիճանաբար հայտնի դարձան ստեղծական մեծածախլ ըզո-
նութիւնները, քաղաքական գործիչները, գիտնականները ու քանակի նշա-
նավոր մասնագետների նկատմամբ: Վերականգնվեց նրանց բարի անունը: Հայ
ժողովուրդը առաջին անգամ իմացավ, որ նա ունեցել է պիլացիայի մար-
շալ, որը նենգ բանասրկուի զոհ է դարձել:

Վերջ նշված որոշումների լույսի ասկ, բարենպաստ գալմաններում
մեկը մյուստի ետևից Մոսկվայում սկսեցին լույս տեսնել մի շարք հիմ-
նարար աշխատութիւններ, նվիրված Հայրենական պատերազմի պատմութեա-
նը: Պատմագիտութեան համար հատկապես կարևոր նշանակութիւն ունեցավ
, խորհրդային Միութեան Հայրենական մեծ պատերազմի պատմութիւնը
1941-1945 թթ., վեցհատորանոց աշխատութեան հրատարակումը, ուր առ-
ջին անգամ մանրամասնորեն ու ծավալուն կերպով լուսաբանվեցին խոր-
հրդային Միութեան շորսամյա հերոսական պայքարի պատմութիւնը: Ետ
ավելի արժեքավոր նոր մտքեր ու փաստեր է պարունակում 1973-1982 թթ.
լույս տեսած 12 հատորանոց «Նրկրորդ համաշխարհային պատերազմի պատ-
մութիւնը 1939-1945 թթ.», աշխատութիւնը:

Միութեանական և ինքնավար հանրապետութիւններում Հայրենական պա-
տերազմի պատմութիւնն ուսումնասիրողների համար այդ աշխատութիւն-
ները ուղեցուց դարձան նորովի շարդրելու պատերազմի պատմութիւնը:
Հայկական ԽՍՀ-ում նույնպես լույս տեսան մի շարք մեծագրութիւն-
ներ:¹

- 1944 թ., Ե.Մ. Խաչեյան, Մովսէսական Միութեան հերոս Հունան Ավետիս-
յան, Երևան, 1950 թ., Բ.Գ. Գրիգորյան, Մովսէսական Միութեան հերոս
Յհան Կարախանյան, Երևան, 1952 թ., Լ.Վարդանյան, Գվարդիայի զինե-
րայ-մայր Մերգիս Կարապետյան, Երևան, 1953 թ.:
- 1 Բ.Գ. Գրիգորյան, Մովսէսական Միութեան հայ հերոսները Կովկասի պաշտ-
պանութեան համար մղված մարտերում, Երևան, 1959 թ., Լ.Վ. Մարտի-
րոսյան, Հայ կանանց սիրազորութիւնները Հայրենական պատերազմի
ռազմամակտներում, 1941-1945 թթ., Երևան, 1961 թ.: Ա.Նալբանդյան,
Քամանցիներ /89-րդ Քամանյան հայկական հրաձգային դիվիզիայի մար-
տական ուղին, Երևան, 1961, Ա.Մայիսյան, Մովսէսական քանակի հայ
գործիչները, Երևան, 1963 թ., Վ.Ն. Լազարյան, Միկոյանի անվան
պարտիզանական շոկադր, Երևան, 1965, Ա.Մ. Սարգսյան, Այդովոր անտառ,
Երևան, 1965, Դ.Ս. Դաւիթբեկյան, Մարտական 89, Երևան, 1986, Հ.Հ.
Սարգիստյան, Սեմանից մինչև Քյոնիգսբերգ, Երևան, 1967, Գ.Ս. Քոնո-
նացյան, Անդրկովկասյան հանրապետութիւնների ազգային միավորում-
ների մասնակցութիւնը Կովկասի ճակատամարտում և Կարմիր բանակի
հետագա մարտական գործողութիւններին 1941-45 թթ. Հայրենական մեծ
պատերազմում, Դոնի-Ռոստով, 1967 /ռուսերեն/, Վ.Ս. Մուրադյան, Ար-
յունուկ թրձված եղբայրութիւն, Մոսկվա, 1969, Հայաստանի դրմուկու-
սը Հայրենական պատերազմի տարիներին, Երևան, 1984 /երկուսն էլ
ռուսերեն/, Բ.Գ. Գրիգորյան, Հայ ժողովրդի մասնակցութիւնը Կով-
կասի պաշտպանութեանը, Երևան, 1971, Ա.Ն. Մնացականյան, Մարշալ
Ֆադրամյան, Երևան, 1973, Միասնական շարքերում, Երևան, 1975 թ.,
Ե.Մ. Խաչեյան, Հայ ժողովրդի մասնակցութիւնը Բելոռուսիայի համար
մղված մարտերին, Երևան, 1975, Թշնամու, Սիկուրնոյում, Երևան, 1990:
Ա.Վ. Լազարյան, Պատերազմ, մարդիկ, մակտազոր, 1-4 հատոր, Երևան,
1975-1984 /ռուսերեն/, Գ.Ս. Գրիգորյան, դրմակներ Ստալինգրադի ճա-
կատամարտերից, Երևան, 1979: Գ.Ք. Թարբեշանյան, Ա.Գ. Սիմոնյան, Մար-
շալ Բաղրամյան, Եր., 1987:

Կովկասի աշխատութիւններ¹, ժողովածուներ² և հուշագրութիւններ³:
1970 թ. լույս տեսավ ՀԽՍՀ ԳԱ պատմութեան ինստիտուտի կողմից
պատրաստված հայ ժողովրդի պատմութեան քաղմահատորութի 8-րդ հատորը:⁴
Հայ ժողովուրդը Հայրենական պատերազմի տարիներին /1941-1945/ բաժի-
նը, որ գրել է Ա.Ն. Մնացականյանը և Ե.Մ. Խաչեյանը, նոր նյութեր օգ-
տագործելով, բովանդակվից ու համառոտ գուլգ են տվել Հայրենական
պատերազմի սկիզբը, հայ ժողովրդի ուժերի մոբիլիզացումը, Հայաստանի
ժողովրդական անստեղծութեան վերակառուցումը պատերազմի պահանջներին
համապատասխան, ռազմական էկոնոմիկայի զարգացումը Հայաստանում, հա-
մաժողովրդական օգնութիւնը ռազմամակտին, հայկական դիվիզիաների
ստեղծումը, հայ ժողովրդի զավակների մասնակցութիւնը մարտական գոր-
ծողութիւններին և այլն:

Ինչպես տեսնում ենք հայ պատմաբանները տարիների ընթացքում մեծ
շնորհակալ աշխատանք են կատարել Հայրենական պատերազմում հայ ժող-
ովրդի մասնակցութիւնն լուսաբանելու ուղղութիւնում: Սակայն, անհրա-
ժեշտ է նշել, որ այդ աշխատութիւնները գրելիս հեղինակները հիմնա-
կանում օգտագործել են տեղական արխիվների /քաղաքային խորհրդային
Միութեան հերոսների/, մամուլում հրատարակված նյութերը և պատերազ-
մին մասնակիցների հիշողութիւնները: Նրանք չեն օգտագործել նախկին
ԽՍՀ-ի, իսկ այժմ Ռուսաստանի Դաշնութեան պաշտպանութեան նախարարու-
թեան արխիվներում պահվող հայ ժողովրդի զավակների մասնակցութեան
մասին հարուստ նյութերը: Բանը նրանում էր, որ մինչև 1960-ական
թվականների կեսերը այդ արխիվների դռները փակ էին ուսումնասիրող-
ների առջև: Այնտեղ աշխատում էին միայն նրանք, որոնք կատարում էին
կուսակցութեան ու կառավարութեան պատվերները:

- Բացառութիւն է Ե.Մ. Խաչեյանի և Վ.Ն. Լազարյանի պարտիզանե-
- 1 Ե.Պ. Աղայան, Եր.Մ. Խաչեյան, Ուրվագծեր Մովսէսական Հայաստանի կոմու-
նիստական կուսակցութեան /2-րդ գիրք/, Եր. 1960 թ.: «Յեր-
վագծեր Հայաստանի կոմունիստական կուսակցութեան պատմութեան», Եր.
1958, 1963, Հայաստանի կոմունիստական կուսակցութեան պատմութեան
ուրվագծեր, Եր. 1967, Հայաստանի Լենինյան կոմերիտիութեան
պատմութիւնը, Եր. 1968: «Գիրք հերոսների մասին», Եր. 1985:
Վ.Ն. Լազարյանի խմբագրութեամբ /ռուսերեն/, «Յոտում են հերոս-
ները», Եր. 1985:
- 2 «Մելտոն Ստեփանյան», Եր. 1968 /ռուսերեն/, «Խորհրդային Հայաս-
տանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին /1941-45/, փաստաթղթե-
րի ու նյութերի ժողովածու, Եր. 1978 /ռուսերեն/, «Հայկական 76-
րդ Կ.Ս. Վորոշիլովի անվան կարմիրգոյշ, 51-րդ զվարդիական վիտեբսկ-
յան Լենինի շքանշանակիր հրաձգային դիվիզիա», 1978, Բանրեր
Հայաստանի արխիվների», թիվ 3: «Հայկական 89-րդ Քամանյան կարմ-
րգոյշ Կուսակցութի երկրորդ առաջնանի, Կարմիր Աստղի շքանշանակիր
հրաձգային դիվիզիայի մարտական ուղին /1942-1945 թթ./», 1985,
«Բանրեր Հայաստանի արխիվների», թիվ 2 և 3:
- 3 Ա.Վ. Լազարյան, «Քոտորդ դար տանկերի վրա», Եր. 1970, Ա.Մ. Մուրադ-
յան, Հերոսական մարտերում, Եր. 1975, Կովկասյան նախա Ռոստովից
մինչև Բելոլին-էլցա, Եր. 1991: Խ.Հ. Բարսեղյան, Կրակների միջով,

րին նվիրված աշխատությունները: Այդ պատմությունը շարադրված է հիմնականում պետական արխիվների նյութերի հիման վրա և լավ է ներկայացված: Վ.Ա.Մուրադյանի, Ս.Մ.Սարգսյանի, Գ.Ս.Բուռնազյանի և Գ.Ա.Աբրահամյանի աշխատությունները նույնպես զրված են Ռուսաստանի գաշտություն Պողոսյանի նշանակալի արխիվի նյութերով: Վ.Ա.Մուրադյանի աշխատությունները նվիրված են խորհրդային ռազմիկների մարտական եղբայրությունն ու բարեկամությունը, բանակում տարվող քաղաքական աշխատանքներին, իսկ մյուսներին՝ նվիրված են ազգային դիվիզիաների մարտական ուղու պատմությանը: Բացի այդ հրատարակված գործերում հիմնականում տրված են հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Կովկասի պաշտպանությունը, ազգային դիվիզիաների մարտական ուղին, առանձին գորահրամատարների ու խորհրդային Միության իերոսաների ռազմական գործունեությունը:

Հանրահայտ է, որ հարյուր հազարավոր հայ ռազմիկներ թշնամու դեմ մարտնչել են ազգային դիվիզիաներից դուրս, խորհրդային բանակի մյուս գործախավորումների ու գործատների, նավատորմների ու նավատորմիկների կազմում՝ Լենինգրադի, Մոսկվայի, Մինսկի, Խարկովի, Օդեսայի, Ստալինգրադի, Ֆուրսկի, Օդեսի տակ, Հյուսիսային Կովկասում, Ղրիմում, Մերձքալինյանում, Մոլդովիայում, մարտերով հասել են մինչև Ռուսիայի, Հունգարիա, Լեհաստան, Չեխոսլովակիա, Բուլղարիա, մասնակցել Բեռլինյան հարձակողական գործողությանը և այլն: Հիշատակված վայրերից յուրաքանչյուրը մեր ժողովրդի զավակների իերոսական սիրագործությունների ծննդավայրերն են:

Այդ բաց լրացնելու համար արդեն բավականին աշխատանք է կատարվել: Հարկ ենք համարում նշել հատկապես պատմական գիտությունների դոկտոր Նիխմենա Հարությունյանի շնորհակալ ու տքնաշան աշխատանքը այդ ուղղությունում:¹

Նա Ռուսաստանի Գաշտություն պաշտպանության նախարարության հարուստ նյութերով զրել ու հրատարակել է հայորդիների մասնակցությունը Եվրոպայի հարավ-արևելյան երկրների /Չեխոսլովակիա, Հունգարիա, Ավստրիա/ ազատագրման մարտերին, մասնակցել նաև մի շարք ժողովածուների ու կուլեկտիվ աշխատանքների հրատարակմանը:

Մեր կողմից հրատարակվել են «Խորհրդային Մերձքալինյանի համար մղված մարտերում», և «Սովետական ռազմիկների մարտական եղբայրու-

Եր. 1985, Վ.Գ.Սիմոնյան, Ռազմի մամուլներով, Եր. 1981:
 4. Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1970, 5-8:
 1. Վ.Ա.Հարությունյան, Հայ ռազմիկները Չեխոսլովակիայի համար մղված մարտերում 1944-1945 թթ., Եր. 1983 թ.: Հայ ռազմիկները Հունգարիայի և Ավստրիայի ազատագրման մարտերում /1944-1945/, Եր. 1980 թ.:

թյանը Լենինգրադի համար մղված մարտերում 1941-1944 թթ., աշխատությունները, որը պաշտպանության ներկայացված ատենախոսության մի մասն են կազմում:

Այդ բոլորը հիմք են տալիս, սնցյալում լույս սնած աշխատությունների նյութերի օգտագործումով նորովի շարադրել հայ ժողովրդի զավակների մասնակցությունը 1941-1945 թթ. Հայրենական պատերազմին:

Աշխատությունը զրելիս հիմնականում օգտագործել ենք նաև ՆՍՄ-ի, այժմ Ռուսաստանի Գաշտություն պաշտպանության նախարարության Պողոսյանի կենտրոնական արխիվի, Կարմիր բանակի Մոսկվայի կենտրոնական արխիվի, Պետական ակտիվություն կոմիտեի սահմանափակ գրքերի, Պուշկինի կենտրոնական արխիվի, ՀՀ ԳԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կարիևտի արխիվի, Լավիաի, Լիտվիայի, Էստոնիայի և Լենինգրադի /այժմ Սանկտ-Պետերբուրգ/ կուսարխիվների, ՀՍՄՀ պինվորական կոմիսարիատի արխիվի, ՀՀ Պետական նկարչական Պատմության արխիվի, Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի գիմվորական և Երևանի հեղափոխության թանգարանի նյութերը:

Այս թեման անսպառ է և մենք շատ զոհ կլինենք, եթե պաշտպանության ներկայացված աշխատանքը հետագայում նշատի այդ հիմնահարցի ամբողջական ուսումնասիրության համար:

Նշված արխիվների նյութերից օգտագործել ենք քաղցնկուցազներ, օգնորտիվ գեկուցազներ, մարտական սիրագործությունները պատմող գեկուցազներ, պատմական տեղեկամատյաններ, խորհրդային բանակի զլխավոր քաղաքական վարչության դիրեկտիվներ, մարտական գործողությունների ժուռնալներ, անձնակազմի հաշվառման, պարզևտրվածների, զոհված ու անհայտ կորածների ցուցակներ, պարզևտրման թերթիկներ, ռազմաճակատների, բանակների, դիվիզիաների, լրիգ-գնդի և այլ գործատների հրամանատարների հրամաններ, նամակներ, անձնական գրքեր, պատերազմի մասնակիցների հիշողություններ, ռազմաճակատային թերթեր և այլն:

Մերձքալինյանում և Լենինգրադի մարզում անձամբ ելել ենք պատմություն դարձած ռազմական գործողությունների վայրերում, եղբայրական գերեզմանոցներում, հայրաբերել ու լուստևերել բազմաթիվ զոհված հայ ռազմիկների շիրիմները: Օգտագործել ենք նաև Մոսկվայում, Սանկտ-Պետերբուրգում և Հայաստանի Հանրապետությունում լույս սնած Հայրենական պատերազմին նվիրված գրականությունն որոշ մասը:

Եղած նյութը հրատարակություն է քննելու մեզ մի շարք ուղղումներ ու մշակումներ կատարելու, որոնք վերաբերվում են ՆՍՄ-ի հյուսիսարևմտյան տարածաշրջանների համար մղված մարտերին հայ ռազմիկների մասնակցություն հարցերին:

ԱՇԽԱՏ ՈՒԹՅԱՆ ԱՌՈՒԹԱՆՔԸ, ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քաղկեցած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, մատենագրությունից, ընդհանուր ծավալը /տոանց մատենագրության/ 422 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորված է հետազոտվող թեմայի արդիականությունը, քաղաքական նշանակությունը, կարևորությունը, գիտական նորությունը, նպատակը և խնդիրները: Ցույց են տրված գրականության ու աղբյուրների վերլուծությունը: Նորովի են գնահատված շատ դեպքերի, իրադարձությունների նշանակությունը և դրա հետևանքները, որոնց նվիրված սույն առնչակետությունը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԻՄ, Հուլիսի 1918-ի և արևմտյան ուղղությունների պաշտպանական մարտերում, և նրա հինգ ենթավերնագրերում շարժված նյութը մեծ մասամբ է նորություն է:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴՅԱՆՈՒԹՅԱՆ պաշտպանության նախարարության Պողոսյանի ու Գառչինայի արխիվների, ինչպես նաև վերջին տարիներին Մոսկվայում լույս տեսած Հայրենական մեծ պատերազմին նվիրված գրքերի և մամուլի հարուստ նյութերով նորովի է շարադրվել Հայրենական պատերազմի նախօրյակի միջազգային դրությունը, խորհրդային Միության և Փաշխասյան Գերմանիայի միմյանց բուրժուական հակառակ տեսանկյունով աշխարհին տիրելու մտազրույցները նմանությունը: Եթե առաջինը ձգտում է գերմանական քարձր ռուսաստան ենթարկել աշխարհը, ապա երկրորդը, որ գեոևս շեր իր ազդեցություն ուղղորդող դրան հնարավոր է ընդլայնել ի հաշիվ ալ երկրներին: Այդ են վկայում խորհրդային դեկավարների խառնակ գործարքը Փաշխասյան Գերմանիայի հետ, որն իր արտացոլումը գտավ 1939 թ. օգոստոսի 23-ի շարժակաման պակտի և սեպտեմբերի 28-ի գաղտնի պայմանագրերում:

Գիտական մեծ նորություն ենք համարում այն, որ առաջին անգամ շրջանառության մեջ ենք զնում նախկինում տարիներ շարունակ հանրապետության գիտնկոմիսարիատում խիստ զաղտնիության պայմաններում պահվող 1939-1945 թթ. գորակոչին /18 տարին լրացած/ և համատարած ընդհանուր գորահավաքին վերաբերվող նյութերը:

Ներկայացնում ենք խորհրդային Հայաստանից 1939-1945 թթ. գորակոչով ու գորահավաքով բանակ մեկնածների թվական տվյալները, ըստ քաղաքների, շրջանների և ազգությունների:

1 Հայաստանի Հանրապետության գիտնկոմիսարիատի արխիվի պատմական տեղեկամատյանի նյութերի հիման վրա՝ հաշվումները կատարվել են մեր կողմից:

Հայկ ԽՍՀ-ից 1939-1945 թթ. գորակոչով ու գորահավաքով խորհրդային բանակ մեկնածների ամփոփ արդյունք

Քաղաքներ ու շրջաններ	Գնակություն 1941թ.	Ձերակոչը 1939-1945թթ.					Ձերահավաքը և գորակոչը 1939-1945թթ.			Ձերահավաքը և գորակոչը 1939-1945թթ.	
		1939	1940	1941-1945	1941-1945թթ գորահավաքով և գորակոչ ամբողջը (%)	1941-1945թթ գորահավաքով և գորակոչ ամբողջը (%)	1939-1945թթ գորահավաքով և գորակոչ ամբողջը (%)	1939-1945թթ գորահավաքով և գորակոչ ամբողջը (%)	հայեր	այլ ազգություններ	
		3	4	5	6	7	8	9	10	11	
1 Երևան	67300	471	1952	2827	7746(11.5)	8621(12.8)	6324(9.4)	2297(3.4)			
2 Ատաղիյան	85000	297	2323	2734	5583(6.5)	7806(12.1)	8317(12.7)	8922(10.6)	1395(2.1)		
3 Մարտավան	74000	647	2286	3597	6113(8.2)	8399(11.3)	9710(13.1)	8558(11.5)	1152(1.5)		
4 Կիրովյան	60000	300	2261	2887	4749(7.9)	7010(11.7)	7818(12.6)	6730(11.2)	866(1.4)		
5 Սպանդարյան	266300	1648	1555	8822	22239(8.35)	3108(11.6)	34284(12.8)	28534(10.7)	5730(2.1)		
6 Ընդհանուր	67729	508	564	4013	8496(12.5)	9489(14)	8622(16.9)	8929(13)	580(0.8)		
7 Լենինական (այժմ Գյումրի)	45473	320	277	3243	5379(11.8)	8025(17.6)	8622(16.9)	6852(15)	1770(3.8)		
8 Կիրովական (այժմ Կամատր)											
9 Չրջաբներ											
10 Մարտավան	45676	753	2633	3922	6210(13.5)	8843(19.3)	10132(22.1)	9584(21)	588(1.2)		
11 Արաբկոյի	42968	562	1742	2638	6106(14.2)	7848(18.2)	8744(20.3)	8259(19.2)	485(1.1)		
12 Աշտարակ	38563	440	2099	2773	5759(15)	7858(20.3)	8532(22.1)	8278(21.4)	254(0.6)		
13 Դամասկոս (այժմ Արտաշատ)	35846	239	1646	2136	4863(13.5)	6509(18.1)	6999(19.5)	5937(16.5)	1062(3)		
14 Արթիկ	35673	535	2206	3301	4583(12.8)	6789(19)	7884(22.1)	7878(22)	6(0.01)		
15 Ախտա (այժմ Հրազդան)	34733	365	1679	2269	4415(12.7)	6094(17.5)	6704(19.3)	8213(17.8)	491(1.4)		

	Ձորակալը 1939-1945թթ.										Ձորակալարը և գորակալը 1939-1945 թթ.										
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	1	2	3	4	5	6	7	8	9	10
10 Բաղադրար (այժմ Վարդանիս)	34644	418	312	1329	2059	4492(13)	5821(16.8)	5551(18.9)	2752(7.9)	3799(11)	34644	418	312	1329	2059	4492(13)	5821(16.8)	5551(18.9)	2752(7.9)	3799(11)	
11 Դուրսբնի (այժմ Ախուրյան)	34369	201	136	1720	2057	3930(11.4)	5650(16.4)	5987(17.4)	5983(17.4)	4(0.01)	34369	201	136	1720	2057	3930(11.4)	5650(16.4)	5987(17.4)	5983(17.4)	4(0.01)	
12 Վարդաշապատ (այժմ Էջմիածին)	33938	336	288	1853	2520	4446(13.1)	6228(18.3)	6966(20.5)	6818(20)	148(0.4)	33938	336	288	1853	2520	4446(13.1)	6228(18.3)	6966(20.5)	6818(20)	148(0.4)	
13 Ն. Բայազետ (այժմ Գավառ)	33916	438	293	1365	2096	4277(12.6)	5644(16.6)	6373(18.8)	6147(18.1)	228(0.7)	33916	438	293	1365	2096	4277(12.6)	5644(16.6)	6373(18.8)	6147(18.1)	228(0.7)	
14 Հովհաննիսյան (այժմ Արմավիր)	31888	90	120	1289	1499	3629(11.4)	4918(15.4)	5128(16)	4853(15.2)	275(0.8)	31888	90	120	1289	1499	3629(11.4)	4918(15.4)	5128(16)	4853(15.2)	275(0.8)	
15 Դավան	31696	353	369	1532	2254	3926(12.3)	5458(17.2)	6180(19.5)	4451(14)	1729(5.4)	31696	353	369	1532	2254	3926(12.3)	5458(17.2)	6180(19.5)	4451(14)	1729(5.4)	
18 Մախոսակ	31349	175	240	1491	1906	3468(11)	4959(15.6)	5374(17.1)	4995(16)	379(1.2)	31349	175	240	1491	1906	3468(11)	4959(15.6)	5374(17.1)	4995(16)	379(1.2)	
17 Թալին	30127	97	262	1458	1817	2582(8.6)	4050(13.4)	4409(14.6)	4213(14)	196(0.6)	30127	97	262	1458	1817	2582(8.6)	4050(13.4)	4409(14.6)	4213(14)	196(0.6)	
18 Ստեփանավան	28442	193	331	1744	2268	3451(12)	5195(18)	5719(20.1)	4728(16.6)	991(3.4)	28442	193	331	1744	2268	3451(12)	5195(18)	5719(20.1)	4728(16.6)	991(3.4)	
19 Ծառչաղին (այժմ Տառչ)	28177	599	175	1409	2183	2959(10.5)	4368(15.5)	5142(18.2)	5133(18.2)	9(0.03)	28177	599	175	1409	2183	2959(10.5)	4368(15.5)	5142(18.2)	5133(18.2)	9(0.03)	
20 Միկոյան (այժմ Սոկրատյան)	27865	233	146	1237	1616	3399(12.2)	4636(16.6)	5015(18)	4301(15.4)	714(2.5)	27865	233	146	1237	1616	3399(12.2)	4636(16.6)	5015(18)	4301(15.4)	714(2.5)	
21 Միսիան	27488	98	528	1611	2237	3172(11.5)	4783(17.4)	5409(19.6)	4518(16.4)	891(3.2)	27488	98	528	1611	2237	3172(11.5)	4783(17.4)	5409(19.6)	4518(16.4)	891(3.2)	
22 Կոտայք (այժմ Արմավան)	37207	230	392	1784	2406	3946(10.6)	5730(15.4)	6352(17)	5857(15.7)	495(1.3)	37207	230	392	1784	2406	3946(10.6)	5730(15.4)	6352(17)	5857(15.7)	495(1.3)	
23 Գորիս	26931	339	521	1494	2354	9076(11.4)	4570(17)	5430(20.1)	5265(19.5)	165(0.6)	26931	339	521	1494	2354	9076(11.4)	4570(17)	5430(20.1)	5265(19.5)	165(0.6)	
24 Ասարան	26789	261	370	1075	1706	3933(14.6)	5008(18.6)	5639(21)	5596(20.8)	43(0.16)	26789	261	370	1075	1706	3933(14.6)	5008(18.6)	5639(21)	5596(20.8)	43(0.16)	
25 Կալինին (այժմ Տաշիր)	23988	139	328	1468	1935	3409(14.2)	4877(20.3)	5344(22.3)	2741(11.4)	2603(10.6)	23988	139	328	1468	1935	3409(14.2)	4877(20.3)	5344(22.3)	2741(11.4)	2603(10.6)	
26 Կրամատոսկ	22801	164	329	1242	1735	3381(14.8)	4623(20.2)	5116(22.4)	2144(9.4)	2972(13)	22801	164	329	1242	1735	3381(14.8)	4623(20.2)	5116(22.4)	2144(9.4)	2972(13)	

	Ձորակալը 1939-1945թթ.										Ձորակալարը և գորակալը 1939-1945 թթ.										
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	1	2	3	4	5	6	7	8	9	10
27 Իջևան	22660	98	217	1088	1403	2765(12.2)	3853(17)	4168(18.4)	4003(17.6)	165(0.7)	22660	98	217	1088	1403	2765(12.2)	3853(17)	4168(18.4)	4003(17.6)	165(0.7)	
28 Չաղկաբաղ (այժմ Սապա)	21004	184	137	771	1092	2835(13.5)	3606(17.1)	3927(18.6)	1263(6)	2864(12.6)	21004	184	137	771	1092	2835(13.5)	3606(17.1)	3927(18.6)	1263(6)	2864(12.6)	
29 Սաան	20851	409	306	1230	1945	2663(12.8)	3693(18.7)	4608(22)	4057(19.4)	551(2.6)	20851	409	306	1230	1945	2663(12.8)	3693(18.7)	4608(22)	4057(19.4)	551(2.6)	
30 Նոյեմբերյան	20171	176	110	1055	1301	2315(11.5)	3330(16.5)	3616(17.9)	2863(14.8)	633(3.1)	20171	176	110	1055	1301	2315(11.5)	3330(16.5)	3616(17.9)	2863(14.8)	633(3.1)	
31 Աղիզբերկ (այժմ Վայք)	18258	71	87	771	929	2212(12.1)	2983(16.3)	3141(17.2)	2015(11)	1126(6.1)	18258	71	87	771	929	2212(12.1)	2983(16.3)	3141(17.2)	2015(11)	1126(6.1)	
32 Վեդի (այժմ Արարատ)	18117	167	107	605	879	2146(11.8)	2751(15.1)	3025(16.6)	1191(6.6)	1834(10.1)	18117	167	107	605	879	2146(11.8)	2751(15.1)	3025(16.6)	1191(6.6)	1834(10.1)	
33 Նուխյան (այժմ Աշոցք)	17413	103	80	1059	1242	1917(11)	2976(17)	3159(18.1)	3159(18.1)	-	17413	103	80	1059	1242	1917(11)	2976(17)	3159(18.1)	3159(18.1)	-	
